ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<<ՀԿՀԿ-ԳՀԱՊՁԲ-2024/02>> ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան <<19>> <<նոյեմբերի>> 2024թ., ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Սուսաննա Թադևոսյան

Անդամներ՝ Փիրուզ Մկրտչյան, Հասմիկ Խաչերյան, Հռիփսիմե Նազարեթյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Բեկթաշյան

«ՀԿՀԿ-ԳՀԱՊՁԲ-2024/02» ծածկագրով գնման ընթացակարգի
Հայտերի բացման, գնահատման և արդյունքների ամփոփման նիստ

1. Նիստը հրավիրվել է ք. Երևան Կորյունի 19ա շին. 7 հասցեում /2-րդ հարկ/:

2. Հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցը.

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	էլ.փոստ, հեռ.համար
1.	<<Մաքս օիլ>> ՍՊԸ	Ք. Երևան Տպագրիչների 8	010526751, Maxoil.llc@mail.ru

3. Նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների նախահաշվահային գինը՝

Դիզելային վառելիք	663000

4. ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին

- մասնակցի կողմից ներկայացված ծրարները կազմված են գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

- մասնակցի կողմից ներկայացված ծրարում հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը առկա են, ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից:

գ. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

- մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

5.հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

Կազմակերպության անվանումը	Չափաբաժիններ	Առաջարկվող գինը /ՀՀ դրամ/առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/
<<Մաքս օիլ>> ՍՊԸ	1	541666.67	108333.33	650000

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

1. «ՀԿՀԿ-ԳՀԱՊՁԲ-2024/02» ծածկագրով գնման ընթացակարգի ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած հետևյալ մասնակցին ճանաչել ընտրված մասնակից

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝
ա/ Արդյունքների ամփոփման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը արդյունքների ամփոփման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում:
բ/ Տեղեկագրում հրապարակել նաև իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:
գ/ Տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու մասին որոշումը:
դ/ Ծանուցել ընտրված մասնակիցներին, Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել որակավորման ապահովումը միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (հավելված 4.2) ձևով՝ պայմանագրի ընդհանուր գնի 15%-ի չափով: Եվ պայմանագրի ապահովում՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (հավելված 5.1) ձևով՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

Պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացրած ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

7. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Թադևոսյան

անդամներ՝ Փ. Մկրտչյան

Հ. Խաչերյան

Հ. Նազարեթյան

Քարտուղար՝ Ս. Բեկթաշյան